

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍ ԳԼԽԱԴԻՐ ԱՌԱՔԵԱԼԸ

Սուրբ Յակոբոսը, Ջերեզեուսի որդին՝ Եւ Եղբայրը Յովհաննէս Աւետարանչի, մէկն էր Քրիստոսի տասներկու առաքելներից: Նրա մայրը համարում էր Յովսէփի դուստրներից Սողոմէն, որ Յիսուսի բոյրն էր¹, իսկ ուրիշներ ասում են թէ Սողոմէն Տիրոջ մօրաբոյրն էր: Յակոբոսին Եւ Յովհաննէսին Յիսուս կոչեց Որոտման Որդիներ², իսկ Յակոբոսը կոչուեց Մեծն Յակոբ, ոչ միայն այն բանի համար, որ Տիրոջ ընտանիքից էր սերում Եւ Տիրոջ ընտրեալագոյն էր, այլ Եւ Քրիստոս նրան նախապատում էր Պետրոսի Եւ Յովհաննէսի հետ միասին խորհրդակցութեան, աղօթքների Եւ այլ տնօրէնութեան ժամանակ, որպէս ի պայծառակերպութեան Թաքորական լերին վրայ³, ժողովրդապետ Յայրոսի դստեր յարութեան⁴ Եւ Գեթսեմանիի այգում՝ խաչելութիւնից առաջ հոգալու Եւ տրտմելու ժամանակ⁵:

Սուրբ Գլխադիրը բոլոր առաքելներից առաջ Քրիստոսից կոչուեց Եւ ընտրուեց աշակերտութեան Անդրէասի, Պետրոսի Եւ իր Եղբոր Յովհաննէսի հետ միասին: Դա Գալիլիայի ափին էր, երբ Տէրը նրանց տեսաւ իրենց հօր Ջերեզեուսի հետ մինչ նաւակի մէջ էին Եւ իրենց ուղկանները կարգի էին բերում: Նրանք իսկոյն թողնելով նաւակը Եւ իրենց հօրը գնացին նրա ետեւից⁶: Այստեղ երեւում է, թէ ինչպէս նրանք մերձ լինելով իրենց երկրաւոր հօրը առ ոչինչ համարեցին նրա գութը

կոչողի նկատմամբ Եւ անմիջապէս հետեւեցին Քրիստոսի: Այս պատճառով Տէրը նրանց այնքան սիրեց մինչեւ իսկ նրանց մայրը համարձակուեց խնդրել Տիրոջից, որ Յակոբոսին Եւ Յովհաննէսին նստեցնի իր աջին Եւ ձախին արքայութեան մէջ⁷: Եւ նրանք յանձն առան խմել Տիրոջ բաժակը Եւ նրա մկրտութեամբ մկրտուել, ուստի Եւ Քրիստոս Յովհաննէսին թոյլ տուեց, որ իր լանջովն ընկնի⁸, իսկ միւսին իր բաժակին արժանացրեց խաչելութիւնից կարճ ժամանակ անց⁹:

Սուրբ Յակոբոսը Քրիստոսի համբարձումից Եւ Սուրբ Հոգու գալստից յետոյ քարոզեց Քրիստոսի անունը Եւ փրկութեան Աւետարանը Հրէաստանում, Սամարիայում Եւ Գալիլիայում Եւ շատերին դարձրեց աստուածգիտութեան: Աւանդութիւնը ասում է թէ նրան վիճակուած էր երթալ նաեւ Իսպանիա¹⁰:

Առաքելը բազում թուով սքանչելիքներ Եւ գորութիւններ կատարեց. հալածեց դեւերին, յաղթեց Քրիստոսի գորութեամբ Հերմոգենէս կախարդին Եւ Փելիտոսին, նրանց Քրիստոսի հաւատի աշակերտ դարձրեց Եւ մկրտեց: Մինչդեռ քարոզութեամբ շրջում էր Հրէաստանում շատերը հաւատացին նրա քարոզած Մեսիային, քանզի մեծամեծ սքանչելիքներ Եւ նշաններ էր կատարում: Խստագոյնս յանդիմանում էր հրեաներին յօրինաց Եւ ի մարգարէից: Իսկ նրանք մտածում էին Քրիստոսի վկային սպանելու մասին, սակայն երկնչում էին հաւատացեալների քաղմութիւնից, որ միշտ նրա հետ էր շրջում բժշկութիւնների պատճառով, որ գործում էին Սրբի կողմից: Նրան ասում էր Աքիւաբար քահանայապետը Եւ չէր

¹ Սուրբ Գրիգոր Տաթեւացի Գիրք քարոզութեանց որ կոչի Ամառան Հատոր, Կ. Պոլիս, 1741, Քարոզ Յօհաննէս Եւ Յակոբայ, էջ 695:

² Մրկ. Գ 17

³ Մտք. Ժէ 1-8

⁴ Մրկ. Ե 22-43

⁵ Մրկ. ԺԴ 32-42

⁶ Մտք. Դ 21,22

⁷ Մտք. Ի 20-24

⁸ Յովհ. ԺԳ 23

⁹ Գործք. ԺԲ 2

¹⁰ Յայսմաւուրթ, Կ. Պոլիս, 1834, Փետրուարի ԻԱ. Եւ Մեհեկի ԺԵ. Յիշատակ է Սուրբ Առաքելոյն Յակոբայ Ջերեզեային, էջ 90:

կարող իր նախանձը եւ չարութեան ցասումը թաքցնել: Ինչպէս վկայում է Հայոց Յայտմաւորքը, նա մի մեծ ամբոխ շարժեց Սուրբ Առաքեալի վրայ, որովհետեւ բոլոր Առաքեալներից աւելի նրան էին տեսնում ջերմեռանդ եւ համարձակ Քրիստոսի քարոզութեանց մէջ, թէ Յիսուսն է՝ Քրիստոսը, ում ակնկալում էին եւ որին խաչեցին, ով եւ գալու է «գորութեամբ եւ փառօք բազմօք» (Մտք. ԻԴ 30):

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՔԵԱԼ ՅԱԿՈՐՈՍԸ ԵՒ ՀԵՐՄՈԳԵՆԷՍ ՄՈԳԸ

Երբ Սուրբը վերադարձաւ Երուսաղէմ նա ահարկու էր հրէաների համար, որպէս որոտում¹¹ քանզի աներկիւղ, խիզախօրէն եւ անվեհեր էր քարոզում Յիսուս Քրիստոսին ասելով, որ նա է ճշմարիտ Մեսիան՝ Քրիստոսը, աշխարհի Փրկիչը: Յակոբոսը վեհերի մէջ միշտ յաղթում էր փարիսեցիներին եւ դպիրներին, մերկացնելով եւ յանդիմանելով նրանց խստասրտութիւնը եւ անհաւատութիւնը: Իսկ նրանք չը կարողանալով ընդդիմանալ Սրբին, վարձեցին ոմն Հերմոգենէս մոգի, որպէս զի նա վիճաբանութեան մէջ մտնէր Յակոբոսի հետ եւ խայտառակէր նրան: Սակայն մոգը հպարտ լինելով չը կամեցաւ ինքն զնալ Յակոբոսի մօտ այլ ուղարկեց իր աշակերտ Փելիտոսին, ասելով. «Ոչ միայն ինձ այլ նոյնիսկ իմ աշակերտին Յակոբոսը չի կարող յաղթել»: Փելիտոսը եկաւ եւ զրուցեց Սուրբ Յակոբոս Առաքեալի հետ, սակայն չը կարողանալով ընդդիմանալ Սուրբ Հոգու իմաստութեանը, որով համակուած էր Առաքեալը, լուռ էր համրի մնաւ եւ քացարձակապէս չէր կարող քացել իր բերանը առարկութեան համար: Ճանաչելով ճշմարտութիւնը Փելիտոսը հնազանդուեց եւ վերադառնալով իր մոգ ուսուցչի մօտ յայտարարեց նրան, որ անկարելի է յաղթել Յակոբոսին, որ վաւերացնում

է իր խօսքերը հրաշքներով: Այսու Փելիտոսը խորհուրդ տուեց իր ուսուցչին թողնել հմայեանքը եւ դառնալ Յակոբոսի աշակերտը: Սակայն ամբարտաւան Հերմոգենէսը իր թովչութեամբ կանչեց դեւերին եւ հրամայեց նրանց բռնել Փելիտոսին մէկ տեղում այնպէս, որպէս զի չը կարողանայ շարժուել եւ ասաց նրան. «Տեսնեմ ինչպէ՞ս քեզ կ'ազատի Յակոբոսը»:

Փելիտոսը գաղտնաբար լուր ուղարկեց Առաքեալին այն մասին, որ նա կապուած է դեւերից Հերմոգենէսի դիւթութիւններով: Իմանալով այս մասին Առաքեալը ուղարկեց նրա մօտ իր երես-սրբիչը ասելով, որ նա վերցնի այդ սրբիչը եւ ասի հետեւեալ խօսքերը՝

Ո՛վ Տէր, ես քո ծառան եմ,

Քո ծառան եւ քո աղախնի որդին:

Դու քանդեցիր իմ կապերը,

Եւ քեզ օրհնութեան պատարագ պիտի մատուցեմ,

Եւ Տիրոջ անունը կանչեմ:¹²

Այն պահին երբ Փելիտոսը հնչեց այս խօսքերը անմիջապէս թօթափուեցին անբերեղոյթ կապանքները, որովհետեւ դեւերը վախեցնալով Աստուծոյ Մարդու սրբիչից եւ քացականչած խօսքերի գորութիւնից, թողեցին Փելիտոսին եւ փախան: Այնժամ Փելիտոսը ծիծաղելով Հերմոգենէսի վրայ վերադարձաւ Սուրբ Յակոբի մօտ եւ ուսանելով նրանից մկրտուեց:

Հերմոգենէսը մեծ ատելութեամբ լեցուելով յանդիմանեց իրեն ծառայող դեւերին եւ հրամայեց կապուած իրեն բերել Յակոբոսին եւ Փելիտոսին, սակայն երբ դեւերը մօտեցան խցիկին, ուր բնակուում էր Յակոբոսը Փելիտոսի հետ, Աստուծոյ հրեշտակը՝ Աստուծոյ հրամանով բռնեց նրանց եւ կապեց անբերեղոյթ շղթաներով եւ սկսեց չարչարել նրանց: Իսկ դեւերը սկսեցին

¹¹ Մկ. Գ 17

¹² Սղմ. ՃԺՁ 16, 17:

բարձրաձայն աղաղակել, ֆանգի Աստ-
ւածային գորութիւնից սարսափելի
տանջում էին ասելով.

-Յակոբոս, Առաքեալ Քրիստոսի,
գթասիրտ եղիր մեր հանդէպ,
որովհետեւ մենք Հերմոգենէսի
հրամանով եկանք քեզ եւ Փելիտոսին
կապելու, բայց մենք ամուր
կապանքներով կապուած ենք եւ
սարսափելի տառապում ենք:

Սուրբ Յակոբը ասաց դեւերին.

-Ձեզ կապող Աստուծոյ
հրեշտակը թող լուծի ձեզ կապանք-
ներից իսկ դուք գնացէ՛ք եւ քերէ՛ք
իմ մօտ, այստեղ Հերմոգենէսին
առանց նրան վնաս պատճառելու:

Դեւերը կապանքներից արձակ-
ուած լինելով գնացին Հերմոգենէսի
մօտ եւ ճանկելով նրան մէկ ակնթար-
թում դրեցին Առաքեալի դիմաց
խնդրելով Սրբին, որ թոյլ տայ իրենց
վրէժը լուծել Հերմոգենէսից:

Սակայն Առաքեալը հարցրեց
դեւերին.

-Ինչու՞ չը կարողացա՞ք կապել
Փելիտոսին ինչպէս ձեզ հրամայեց
Հերմոգենէսը:

Դեւերը պատասխանեցին.

-Մենք քո տանդ մէջ նոյնիսկ
ճանճի չենք կարող ձեռք տալ:

Յայնժամ Առաքեալը ասաց
Փելիտոսին.

-Մեր Տէրը պատուիրել է չարի-
քի դիմաց քարիքով հատուցել¹³,
ուրեմն դու եւս ազատիր Հերմոգենէ-
սին: Արձակի՛ր նրան դեւերից:

Սրանից յետոյ, Առաքեալը
դիւային կապանքներից ազատուած
Հերմոգենէսին ասաց.

-Մեր Տէրը չի կամենում
հարկադրեալ ծառաներ ունենալ, այլ
միմիայն յօժարակամ: Այդ պատճառով
գնա՛ ուր կամենում ես:

Սակայն Հերմոգենէսը ասաց.

-Այն պահին երբ դուրս գամ
քո տանից ինձ կը սպանեն դեւերը,
որովհետեւ գիտեմ որքան է նրանց

կատաղութիւնը: Գիտեմ նաեւ որ չեմ
կարող նրանցից ազատուել եթէ դու չը
պաշտպանես ինձ:

Յայնժամ Առաքեալը նրա ձեռքը
տուեց իր գաւազանը որ օգտագոր-
ծում էր ճանապարհորդելիս: Հերմոգե-
նէսը գնաց այդ գաւազանով իր տունը
եւ չ'ենթարկուեց ոչ մէկ յարձակումի:

Այսպէս գիտակցելով Քրիստոսի
գորութիւնը եւ դեւերի անկարողութիւ-
նը հաւաքեց իր կախարդութեան
գրքերը, քերեց Սուրբ Յակոբին եւ
նոյնքան ընկնելով քացականչեց.

-Ճշմարիտ Աստուծոյ՝ ճշմարիտ
ծառայ, մարդկանց հոգիները կորստից
ազատո՛ղ: Ողորմի՛ր ինձ եւ ընդունի՛ր
քո թշնամուն յաշակերտութիւն քեզ:

Աշակերտելով Յակոբոսին եւ
ճշմարիտ հաւատը ուսանելով Հերմո-
գենէսը այրեց դիւային գրականութիւ-
նը, ընդունեց Սուրբ Մկրտութիւնը եւ
դարձաւ ճշմարիտ ծառայ Քրիստոսի,
այն աստիճան՝ որ Յիսուս Քրիստոսի
անունով հրաշքներ էր գործում:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Մոլեռանդ հրէաները, տեսնելով
պատահածը ցասումով լեցուեցին եւ
զայրացած բռնեցին նրան եւ նրա
պարանոցը պարան գցելով կապեցին
եւ տարան Հերովդէսի ապարանքը:
Չարախօսեցին առաքեալին, խնդրեցին
եւ համոզեցին Հերովդէսին¹⁴ որպէս
գի սպանի նրան, իսկ նա հրէաներին
հաճոյ լինելու սիրոյն՝ Յակոբոսին
սպանեց եւ սկսեց հալածել Եկեղեցին:
«Այդ ժամանակներում Հերովդէս
թագաւորը ձեռնարկեց եկեղեցուց
ոմանց չարչարելու գործին եւ
Յովհաննէսի եղբօրը՝ Յակոբոսին,
սրով սպանեց» (Գործք ԺԲ 1, 2):

¹⁴ Այստեղ Հերովդէս Ագրիպաս Ա, Արիստո-
բուլոսի որդին եւ Մեծն Հերովդէսի թոռը: Նա
թագաւորեց Հրէաստանում 40-44թթ.:

¹³ Մտք. Ե 38-42

Եւսեբիոսը¹⁵, Պաղեստինեան Կեսարիայի եպիսկոպոսը, պատմելով սուրբ Յակոբոսի մասին գրում է, որ երբ այն Հերովդէսից դատապարտուած էր մահուան, Յովսիաս անունով մէկը, որ մատնել էր Առաքեալը Հերովդէսին, տեսնելով Յակոբոսի արիութիւնը եւ խիզախութիւնը, եւ հասկանալով նրա անմեղութիւնը եւ սրբութիւնը, նաեւ նրա կողմից ասուած խօսքերի ճշմարտացիութիւնը Մեսիա-Քրիստոսի գալստեան մասին, հաւատաց Յիսուսին եւ դարձաւ Քրիստոսի խոստովանողը: Յայնժամ նա էլ սուրբ Յակոբոս առաքեալի հետ դատապարտուեց մահուան: Երբ նրանք գնում էին դէպի մահապատժի վայրը, հանդիպեցին ճանապարհին ընկած անդամալոյծ մէկի եւ Սուրբ Առաքեալը բժշկեց նրան: Երբ նրանք խոնարհեցին իրենց գլուխները հատման համար Յովսիասն աղաչում էր Սուրբ Յակոբոսին, որպէս զի ների անգիտութեան պատճառով գործուած մեղքը: Ների նրան գաղտնաբար ամբաստանութեան համար քագաւորի առաջ: Առաքեալը գրկելով համբուրեց նրան եւ ասաց. «Խաղաղութիւնն ընդ քեզ», - եւ նրանք աղօթից յետոյ, խոնարհեցրին իրենց գլուխները ի հատումն եւ նահատակուեցին երկոքեան ի միասին:

Սուրբ Յակոբը նահատակուեց 42-44 թուականների միջեւ ընկած ժամանակահատուածում¹⁶: Առաքեալը երկրորդ վկան եղաւ Ստեփանոսից յետոյ եւ առաջին մարտիրոսը ի մէջ առաքելոց: Նա իր կեանքը աւարտեց վկայութեամբ Քրիստոսի համար մահուան բաժակը ըմպելով եւ իր Տիրոջը խաչակից լինելով, որպէս յա-

ռաջագոյն խոստացել էր նրան Քրիստոս: Ասում է թէ Յակոբոս առաքեալը գլխատուեց նոյն օրը եւ նոյն ժամին երբ խաչուեց մեր Տէրը՝ Մարտամսի 27-ին: Սակայն եկեղեցական օրացոյցի մէջ Հոգեգալուստի տօնից յետոյ դրուեց նրա յիշատակի օրը, որովհետեւ եկեղեցին յատուկ է տօնում Քրիստոսի չարչարանաց օրերը¹⁷:

Ըստ Հայ Առաքելական եկեղեցու աւանդութեան Սուրբի նահատակութիւնից յետոյ նրա պատուական գլուխը՝ անգին գանձը, հրեշտակների կողմից քերում է Աստուածամայր Կոյսին եւ դրում է նրա գոգը: Իսկ Սուրբ Աստուածածինը Յովհաննէս Աւետարանչի եւ Յակոբոս Տեառնեղորոքի հետ միասին անփոփում է պատուական գանձը Երուսաղէմի Սուրբ Յակոբ մատուռի մէջ: Քանզի այդ էր բնականաւորը Աստուածածնի եւ վերոյիշեալ Առաքեալների, որոնց խնամքին էր յանձնուած Տիրոջ մայրը, Քրիստոսի կողմից. «Երբ Յիսուս տեսաւ մօրը եւ այն աշակերտին, որ մօտ էր կանգնած, որին նա սիրում էր [Յովհաննէս Աւետարանչին], մօրն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եւ այդ պահից աշակերտը նրան իր մօտ առաւ» (Յովհ. ԺԹ 26, 27): Իսկ Կրտսէր Յակոբոսի՝ Տեառնեղորոք նստաւայրը այժմեան Հայոց Երուսաղէմի Սուրբ Յակոբ Տաճարն է, որտեղից նա հովում էր Երուսաղէմի եկեղեցին, լինելով Սուրբ Քաղաքի անդրամիկ եպիսկոպոսը եւ պատրիարքը:

Իսկ սրբի պատուական մարմինը նրա աշակերտների կողմից գիշերով վերցւում եւ հրէաների երկիւղից ծածուկ տարւում է Յովպէ, դրում մի նաւակ եւ յանձնում է Տիրոջը խնդրելով թէ ու՛ր կամենում է այտեղ էլ լինի նրա գերեզմանը: Հրեշտակի կողմից առաջնորդուած

¹⁵ Հռչակաւոր եկեղեցական պատմիչ, որ ապրեց 263-340թթ.: Իր «Եկեղեցւոյ Պատմութիւնը» քերուած է մինչեւ 324թ.:

¹⁶ Coulson, John, The Saints, Oxford 1958, p. 387.

¹⁷ Յայսմաւորք, տպարան Պօղոսի Արապեան Ապոպիսցւոյ, Կոստանդնուպօլիս 1834-ՌՄ24: Ապրիլի 1, եւ Ահկի ԻԳ. վկայութիւն սր եւ փառաւորեալ առաքելոյն Յակոբայ Զերեթանց, էջ 193:

նաւը բերում է մարմինը ծովեզրը Իսպանիայի, որ նախապէս վիճակն էր Յակոբոս Առաքելի¹⁸:

Այլ աւանդութիւններ¹⁹ յայտնում են, որ Յակոբոսի աշակերները իր մահից յետոյ վերցնելով ուսուցչի մարմինը տանում են Իսպանիա ուր ցայսօր մեծ սրբատեղի է եւ ուխտավայր: Իսկ գերեզմանի վրայ²⁰ մեծամեծ հրաշքներ են կատարում ի փառս Քրիստոսի:

Հայոց աւանդութեանց հետ Իսպանական աւանդութիւնը ասում է թէ Յակոբոսը կոչուած էր Աւետարանը բերելու Իսպանիա: Կարծում ենք, որ այդ պնդումը ծագում է առել եօթներորդ դարի մի Յունական աղբիւրից եւ տարակուսելի է, քանզի Պօղոս առաքելն էր առաջին ակտիւ միսիոնարական բարոզութիւն ծաւալողը արեւմուտքում: Այդ ժամանակ Յակոբոսը շուտուանից նահատակուած էր: Այստեղից հետեւութիւն կարելի է անել, որ Յակոբոսը ոչ թէ ի կեանս ժամանակ այցելեց Իսպանիա այլ յետ մահու, եւ յետ մահու շատ անելի մեծ գործեր կատարեց. բժշկեց հիւանդների, դարձի բերեց մոլորեալների: Ալեգորիկ կերպով եկեղեցւոյ հայրերը գուցահեռ են անցկացնում Սուրբ Գրային Սամփսոնի եւ Յակոբոս առաքելի միջեւ, թէ մահուան ժամանակ առանել փղշտացիներ սպանեց քան ի կեանս ժամանակ²¹: Այսուհանդերձ մենք չենք առարկում Յակոբոսի մարմնի Կոմպոստելայում լինելու փաստին:

Ը դարում հրաշալի մի աստղ երեւաց այն մասում ուր գտնուում էր

Յակոբոսի անգլուխ մարմինը ցոյց տալով նրա գերեզմանի տեղը: Ժողովրդական այդ հաւատն արագօրէն տարածուեց ի մէջ արեւմտեան հաւատացելոց: Կոմպոստելայի այդ սրբատեղին, օտար լեզուով՝ Santiago de Compostela, հաւանաբար ծագում առած Campus stellae-ից, որ նշանակում է Աստղի Դաշտ: Յետոյ Հռոմը ձեռնարկեց հռչակել այդ սրբատեղին որպէս ուխտատեղի²²:

Ըստ հայ աւանդութեան՝ սուրբ Յակոբի նահատակութիւնից յետոյ, ինչպէս ասացինք վերելում, նրա գլուխը ամփոփուեց Սուրբ Գլխադիր մատուռի մէջ՝ Աստուածամօր, Սուրբ Յովհաննէս Աւետարանչի եւ Յակոբոս Տեառնեղոօր կողմից: Ի սկզբանէ այդ սրբատեղիի ծառայողներն ու պահպանողները եղել են հայ հաւատացեալները: Այժմ այն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Մայր Տաճարում է, եկեղեցու հիւսիսային մասում: Սրբատեղին նշանակուած է Գլխադիր Սուրբ Յակոբի մատուռի խորանի տակ. գեղեցիկ արծաթեայ շրջանակով: Սրբազան գանձի աջ եւ ձախ մասում մշտավառ երեքական կանթեղ է կախուած, իսկ նրանց մէջտեղում պատկերուած է սրբազան Առաքելի գլուխը ոսկէ շրջանակի մէջ: Սուրբը հանդիսանում է համայն հայ ազգի հիմնական բարեխօսներից մէկը եւ ի մասնաւորի պահապանը Սրբոց Յակոբեանց Վանքի եւ Հայոց Պատրիարքութեան յերուսաղէմ:

Հայոց ժամագրքում առաւօտեան ժամերգութեան վերջաւորութեան, սրբոց օրերին մշտապէս Հայաստանեայց առաջին լուսաւորիչներ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելների անունը արտասանելուց յետոյ ժամօրհնող վարդապետի կողմից

¹⁸ Յայսմաւուրք, տպարան Պօղոսի Արապեան Ապոպչիցւոյ, Կոստանդնուպօլիս 1834-ՌՄԶԳ, էջ 193:

¹⁹ Վարդ Սրբոց, Դիմիտրի Ռոստովսկու, հատոր 4-րդ, Ապրիլ, Մոսկվա 1997:

²⁰ Սուրբ Յակոբոս Առաքելի մարմինը այժմ գտնուում է Կոմպոստելայում, Իսպանական Փալիցիա Թագաւորութեան կարեւորագոյն բաղաժամ, որտեղ այն բերուեց իններորդ դարի սկզբում:

²¹ Դատաւորներ ԺՁ 30

²² Coulson John, The Saints, Oxford 1958, p. 387.

²³ Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1955, էջ 329:

հնչում է երջանիկ Սրբոց Յակոբեանց Առաքելաների անունը²³:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍԻ ԿՍՏԱՐԱՄ
ՀՐԱՇՔՆԵՐԸ

• Երուսաղեմացի Հաննէ վարդապետը իր «Գիրք պատմութեան Սրբոյ եւ Մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղեմիս եւ Սրբոց տնօրինականաց տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»²⁴ պատմում է, թէ Յաքոբ քաղաքի հարաւակողմը՝ ծովեզրին, մի սին կար, որին կապել էր Սրբի անգլուխ մարմինը իսպանացի ազնուական մի կին: Այդ սինը խաբսխուած էր ջրի մէջ: Աստուծոյ հրամանով հրեշտակների կողմից սինը վերցւում եւ տարւում է իսպանիա, մերձ մի քաղաքի: Եւ ահա ոմն մի կոյր գալով գետեզրը կամենում էր երեսը լուանալ: Ձեռքը ջրին տանելով դիպչում է սեանը կապուած օրհնեալ մարմնին եւ նրա աչքերը բացւում են: Մարդը զարմանալով ապշում է: Ուրախութիւնից ցատկոտում եւ սկսում է համբուրել իրեն լոյս պարգեւող անգլուխ մարդկային մարմինը: Շտապելով վազում է քաղաք եւ սկսում է գոռալ, թէ. «Եկէ՛ք, տեսէ՛ք անգլուխ աստուած է յայտնուել մեր մէջ, որ իմ աչքերը բացեց»: Իսկ ազնուական տիկինը լսելով այդ գալիս է եւ փնտրում սրբազան գանձը, սակայն չի գտնում: Այնուհետեւ նրան տեսիլով երեսում է Սուրբը եւ յայտնում իր ուր լինելը: Տիկինը գալով գտնում է այն եւ տեսնում, թէ ինչպէս քաղաքացիների կողմից այն պատուում էր իբրեւ անգլուխ աստուած: Այժմ Յաքոբայում սեան տեղը յայտնի չէ, միայն գիտենք թէ այն քաղաքի հարաւային կողմում էր ինչպէս պատմուած է յայսմաւորում:

• Երբ Եգիպտոսի Սալահետին սուլթանը արշաւում էր Երուսաղեմը²⁵, նա Սիոնի բարձունքի վրայ տեսաւ գեղեցիկ Սրբոց Յակովբեանց Մայր Տաճարը եւ կարծեց թէ դա մզկիթ է: Սակայն երբ մօտեցաւ, նրան հասկացրեցին, թէ դա Հայոց Սրբոց Յակովբեանց Եկեղեցին է ուր հայերը աղօթքի են հաւաքուում: Նա ցանկացաւ իւրացնել սա՛ մզկիթ շինելու նպատակով: Յայնժամ մեր օրհնեալ ազգը, այր եւ կին, ծեր եւ տղայ, արտասուաթոր աչքերով եւ կսկծալի սրտերով դիմեցին Սուլթանին խնայել նրանց եւ այդ չարիքը չը գործել. չը գրկել նրանց իրենց բնիկ հայրենի ժառանգութիւնից: Սալահետինը տեսնելով Հայոց անմխիթար վիճակը եւ մանաւանդ բարձր եւ մեծանուն Աստուծոյ անունը լսելով, որոշեց ձգձգել այս հարցը եւ դիմեց հնարքի: «Այո՛, –ասաց նա,– կը տամ ձեզ Մարեաղուպը, սակայն ոչ հիմայ»: Նա հրամայեց քաղաքի փակել լուսամուտներն ու դռները եւ կնքեց: Սուրբ Յակոբի մէջ միայն թողեց Աւագ Խորանի լուցեալ կանթեղը որպէս նշան, եւ ասաց. «Ես այս նշանն եմ թողնում եւ ահա գնում եմ: Դամասկոսից վերադառնալիս եթէ գտայ նշանը որպէս դրեցի, յայնժամ կը տամ ձեզ»: Սուլթանը արեց ինչպէս եւ ասաց, թողնելով Աւագ Խորանի կանթեղը վառ՝ առանց ոեւէ մէկի գիտութեան:

Վանքիս միաբանութիւնը ճարը կտրած եկեղեցու դռան մօտ, տաճարի գաւթում՝ պատի մէջ շինեց՝ յաջակողմ յանուն Սրբոյն Գեորգայ երազահաս վկայի եւ Նիկողայոս հրաշագործ հայրապետի ի ձախակողմ, եւ այնտեղ շարունակեց իր աղօթքներն ու պատարագները: Այսպիսի երեսման մէջ մնաց մեր ազգը եօթը տարի

²⁴ Տպագրուած ի Կ. Պոլիս ի 1807 էջ 66,67:

²⁵ Հրաշքը պատմում է Հաննէ վարդապետ Երուսաղեմացին: Գիրք պատմութեան Սրբոյ եւ Մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղեմիս եւ Սրբոց տնօրինականաց տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ. Պոլիս, 1807 էջ 78,79:

մինչև վերադարձաւ Սուլթանը: Նա գալով քանդեց իր հրամանով ծեփած դուռը եւ մօտեցաւ Աւագ Խորանին: Եւ ո՛վ հրաշք. սարդոստայնով հիւսուած գեղեցիկ կանթեղը տակաւին վառոււմ էր Աստուծոյ շնորհիւով եւ Սուրբ Յակոբի զօրութեամբ:

Սալահետինը այնուհետեւ եկեղեցին հաստատեց որպէս Հայոց սեփականութիւն: Ցայսօր վանքի արտաքին դռանը մնում է արաբերէն անէծքը իրենց օրէնքի համաձայն, թէ «Ոչ ոք չհամարձակուի առնել սա Հայերի ձեռքից»²⁶:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԱՐԼ. ԱԹԱՋԱՆԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Աստուածաշունչ մատնան Հին եւ Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:
2. Նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1981
3. Ժամագիրք Հայաստանայց Ս. Եկեղեցւոյ արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ նրանն ի Հայրապետացն մերոց Գիտոյ եւ Յովհաննու Մանդակունոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1955:
4. Յայսմաւորք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմաւորաց Տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834:
5. Սուրբ Գրիգոր Տաթևացի, Գիրք Քարոզութեան որ կոչի Ամառան Հատոր, Կ. Պոլիս, 1741:
6. Հաննէ-Յովհաննէս Վրդ. Երուսաղէմացի, Գիրք Պատմութեան Երուսաղէմի, Կ. Պոլիս, 1782:
7. Մկրտիչ Եպս. Աղանունի, Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:

9. Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւն Սրբոց որք կան ի Տօնացոյցի Եկեղեցւոյ Հայաստանայց, Վենետիկ, 1810:
10. Մկրտիչ Եպս. Աղանունի, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ, Երուսաղէմ, 1931:
11. Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի 2 հատ., Երուսաղէմ, 1931:
12. Coulson John, The Saints, Oxford, 1958.
13. Wendy Doniger, Consulting Editor, Merriam-Webster's Encyclopedia of World Religions, Springfield, Massachusetts, 1999.
14. Սուրբնրու Կենսքը, աշխարհաբարի վերածուած գրաբար "Վարք Սրբոց"-էն, Պէյրութ, 1994:
15. Святитель Димитрий Ростовский, Жития Святых в XII томах, Москва, 1908.
16. The new Foxe's Book of Martyrs, John Foxe, Bridge-Logos Publishers, 1997.
17. Turner Victor, "The Center Out There: Pilgrim's Goal"

²⁶ Վանքի արտաքին դրան նկատարձանագրութիւնը գրել է տունը Եգիպտոսի Սուլթան Մելիք Ջահր Չայսմախ (1438-1453), Երուսաղէմի Հայոց Մարտիրոս Պատրիարքի օրով: Մկրտիչ Եպս. Աղանունի, Միաբանք եւ այցելութ Հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 267: